խորժ ուտելոյ. բայց զի չէր ի տան անդր բաց ի գարէջրոյ, բրդեալ ի նա զհաց՝ կերի և առաւել զօրացայ։ Ապա աղաչեցի զկարուակն գտանել զկառ ի վարձու. և նա իւրով կառաւ և ձիով մատոյց զինքն պատրաստ՝ հասուցանել ցաւանն Պուպոքով, երկու մղոնաւ հեռի անդուստ։ Հասեալք ուրեմն անդ՝ գնացի ի տունն ուր օդեալն էի երբեմն, մինչ գնայի յայցելութիւն Սթանիսլավովու. և տանուտէրն Սթանիսլաւ և կինն Հեղինէ, ոչ գիտեմ որպէս՝ ծանեան զիս. և հիացեալք հարցին զպատճառն, և տեղեկացեալք զամենայն անցս՝ յարտասուս հարան. մինչ զի և ես փղձկեցայ։ Աղաչեցին զի հանդիցէի յանկողնոջ իւրեանց, և արարի։ Իբրեւ զարթեայ՝ տեսի պատրաստեցեալ զսեղան պէսպէս խորտկօք համեմեցելովք. կերի և արբի զմեղրալուր ազնիւ յոյժ և համեղ, և զուարթացաւ սիրտս. և գոհացայ զնախախնամութենէն Աստուծոյ, որ յայնքանեաց նեղութեանց ազատեալ, առաւել զարժանն իմ մխիթարեաց. և եկեալ ի միաս բանն Սողոմոնի, Ցորժամ ի քան սեղան հզօրաց ուտիցես, եայլն. խորհէի, թէ ուստի վճարիցէի զփոխարէն այնքանոյ մարդասիրութեան, զի մի զլօթի միայն մնացեալ էր առ իս։ Ցետ գոհանալոյն՝ ասեմ ցտանուտէրն. Սիրելի եղբայր, պակասեցաւ ինձ դրամ ծախուց. արա սէր, և տուր ինձ փոխ 15 զլօթայս. և զիտ կառ զի երթիցեմ մինչեւ Սթանիսլավով, և անդուստ վերառաքեցից քեզ գոհութեամբ։ Պատասխանեաց. Աբարից զամենայն զոր ցանկայ անձն տեառնդ իմոյ. բայց ոչ կամէի թէ ի Սթանիսլավով, այլ ի Ռոհաթին գնայիր, որ հեռի է չորիւք մղոնօք. զի թէ խնդրակք եւս արձակիցէին զկնի, ոչ դիւրաւ գըտանէին՝ առնելովդ զծիրն զայն։ Ընկալայ զխրատն խոհեմ և չնորհակալ եղէ։ Եւ ուրեմն այրն, վարձեաց զկառն՝ հինգ զլօթայի. եդիտ և զերկուս ձիաւորս՝ որք տանէին, անդէն էին գնալոց. և եկն նոքօք, և յանձնեաց զիս նոցա, զի անվընաս հասուցանիցէին ի տեղին։ Իբրեւ եղեւ ժամանակ գնալոյ, եկին այրն և կինն ընդ փոքու մանկան իւրեանց, ետուն զ'15 զլօթիսն, և ասեն. Հայր սուրբ, զվարձ կառին վճարեցինք, և զայս զրամս չնորհեմք ի ծախս ճանապարհի. և օրհնեա զմեզ, զի զաւակք՝ զորս տայ մեզ Աստուած՝ մեռանին. թերեւս աղօթիւք քովք՝ զմինս զայս պահեսցէ Աստուած ժառանգ մեզ։ Զարմացայ ընդ հաւատ նոցա. և օրհնեալ ըստ ցանկութեան իւրեանց՝ գնացինք։

Ի ճանապարհին հանդիպեցաք յաւանն Սթրէլիսքայ, և յերեկոյին անագան հասինք յարտաքաղաքն Ռոհաթինու. և անդէն ի տան գրգակազմի ուրումն Ռուզի՝ Գասասուլեաք կոչեցելոյ՝ օթեցինք։ Այլ սակաւ դանդաղանութիւն անցելոյ գիշերին պատահեցաւ, յանդիպաւորութենէ՝ ճանապարհին և ի վիրաց.. առեցելոցն յառաջնումն աւուր ձիաւորութեան. որ և զբոլոր գիշերն տքուն անցուցի տապիւ մեծաւ. թէ և ի տոնտիկնոջէն գթասիրաբար տածիցէի, որ ընդ իս տքնիւր և մայրաբար աղէխարշիւր։

13. Ի շաբաթոջ առաւօտու զառաւել ջերմութիւն զգացեալ ի տքնութենէ և ի ցաւոց վիրացն, գուցէ ի մեծագոյն ախտ անկանիցէի յանդիպաւորութենէ. առաքեցի զոպասաւորն՝ որոնել ի քաղաքէն զօթեւան, կամ ի հո-